ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 46

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 17.07.2018թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 14 (տասնչորս) անդամից 9-ը (ինը):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի պարտականություններ կատարող
2. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի խորհրդական,
3. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
4. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
5. Վ. Խաչատրյան՝ արհեստակցական կազմակերպության նախագահ,
6. Ա. Սարգսյան՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն,
7. Թ. Խաչատրյան՝ գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն,
8. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն
9. Ն. Միրզոյան՝ իրավաբանական ծառայությունների, փաստաթղթերի պահպանման և արխիվացման հատուկ բաժնի վարիչ

ՕՐԱԿԱՐԳ

1. Շիրակի պետական համալսարանի 2018 թ.-ի ներբուհական դրամաշնորհային ծրագրի N ShSU 01-SCI-2018 թեմայի շրջանակներում պրոֆեսոր Հ. Դրմեյանի կողմից ղեկավարվող խմբում ընդգրկված Քնարիկ Երիցյանին (2018 թ.-ին ստացել է մագիստրոսի որակավորում՝ ֆիզիկա մասնագիտությամբ) Տաթև Հարոյանով (2018 թ.-ի սեպտեմբերից ֆիզիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի) փոխարինման հարցի մասին

Հաղ՝. գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

1. ԼՍԵՑԻՆ՝

Շիրակի պետական համալսարանի 2018 թ.-ի ներբուհական դրամաշնորհային ծրագրի N ShSU 01-SCI-2018 թեմայի շրջանակներում պրոֆեսոր Հ. Դրմեյանի կողմից ղեկավարվող խմբում ընդգրկված Քնարիկ Երիցյանին (2018 թ.-ին ստացել է մագիստրոսի որակավորում՝ ֆիզիկա մասնագիտությամբ) Տաթև Հարոյանով (2018 թ.-ի սեպտեմբերից ֆիզիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի) փոխարինման հարցի մասին

Ըստ «Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգի 5-րդ կետի (խմբերում պետք է ընդգրկվի բարձր առաջադիմությամբ առնվազն 1 ուսանող (բակալավրի 3-4-րդ կուրսի կամ մագիստրատուրայի), կամ ասպիրանտ/հայցորդ, կամ մինչև 35 տարեկան պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչ) և «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական գործունեության համար ներբուհական դրամաշնորհի տրամադրման կարգի 7-րդ կետի (խմբում պետք է ընդգրկվի բարձր առաջադիմությամբ ՇՊՀ առնվազն 1 ուսանող (բակալավրի 3-4-րդ կուրսի կամ մագիստրոսի կամ ասպիրանտ/հայցորդի կրթական աստիճանի) (Լրամշակված՝ գիտական խորհրդի 2017թ-ի դեկտեմբերի 4-ի նիստում)): Հետևաբար, քանի որ խմբում համապատասխան կետերին բավարարող այլ անձինք ներգրավված չեն, ապա խմբում ներգրավված ուսանողները, ովքեր ավարտել են 2018թ-ին, պետք է փոխարինվեն համարժեք անձանցով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Շիրակի պետական համալսարանի 2018 թ.-ի ներբուհական դրամաշնորհային ծրագրի N ShSU 01-SCI-2018 թեմայի շրջանակներում պրոֆեսոր Հ. Դրմեյանի կողմից ղեկավարվող խմբում ընդգրկված Քնարիկ Երիցյանին (2018 թ.-ին ստացել է

մագիստրոսի որակավորում՝ ֆիզիկա մասնագիտությամբ) փոխարինել Տաթև Հարոյանով (2018 թ.-ի սեպտեմբերից ֆիզիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի):

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի պարտականություններ կատարող՝	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ.Պետրոսյան
Ռեկտորի խորհրդական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS	

կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան
Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն՝	Ն. Ավետիսյան
Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան՝	Բ. Պողոսյան
Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝	Թ. Մելիքյան
Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝	Ռ. Մարդոյան
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝	Օ. Հովհաննիսյան
Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի վարիչ՝	Ն. Միրզոյան